ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
«ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

15/04/2019թ.

ՀՀ Շիրակի մարզպետ

պ. Տ. Պետրոսյանին

Հարգելի պ. Տ. Պետրոսյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Շիրակավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում հայտարարվել է մրցույթ ինֆորմատիկայի և մաթեմատիկայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Դպրոցի տնօրեն Ն. Համբարյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 06368-19
15 04 2019

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ, աշխատավարձ 36273 դրամ) մաթեմատիկայի (12.5 դասաժամ, աշխատավարձ 72582 դրամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համաձայն որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **մայիսի 13-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը 10 : 00-ից 15 : 00-ն**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի

Մրցույթը տեղի կունենա **մայիսի 14-ին՝ ժամը 15:00 –ին** Շիրակի մարզի Շիրակավանի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ գ. Շիրակավան, 4-րդ փողոց, շենք 31:
Տեղեկությունների համար զանգահարել (094) 932126, (094) 652400 հեռախոսահամարներին: